ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Կ-914[1]-29.03.2021-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» 1985 թվականի դեկտեմբերի 06-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 201-րդ հոդվածը՝

1) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Օտարերկրացու հետ աշխատանքային պայմանագիր կնքելը, ~~Գործատուի կողմից առանց~~ «Օտարերկրացիների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով տրամադրված ժամանակավոր կացության կարգավիճակը հավաստող փաստաթղթի ~~օտարերկրացու հետ աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր կնքելը~~, բացառությամբ առանց նման փաստաթղթի Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք ունեցող օտարերկրացիների՝

առաջացնում է տուգանքի նշանակում ~~գործատուի նկատմամբ՝~~ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:»:

2) 3-րդ մասից հետո լրացնել 4-րդ եւ 5-րդ մասեր բովանդակությամբ.

« Օտարերկրացու հետ աշխատանքային պայմանագիր կնքելը,~~Գործատուի կողմից առանց~~ «Օտարերկրացիների մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով նախատեսված օտարերկրացի աշխատողների ընտրության միասնական էլեկտրոնային հարթակն օգտագործելու ~~օտարերկրացու հետ աշխատանքային (ծառայությունների մատուցման) պայմանագիր կնքելը~~, բացառությամբ առանց կացության կարգավիճակի աշխատելու իրավունք ունեցող օտարերկրացիների՝

առաջացնում է տուգանքի նշանակում ~~գործատուի նկատմամբ~~՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

~~Գործատուի կողմից ~~ ~~ս~~ Սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերով նախատեսված տուգանքի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նույն խախտումը կրկնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ~~գործատուի նկատմամբ~~՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի «եւ 201-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «հոդվածներով եւ 201-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-5-րդ մասերով» թվերով եւ բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 01-ից: